հոգևորս և մարմնականս, հանդերձ քաղաքողջ կենօք ընդ տիրապարգև գերդաստանաց ձերոց։

«Ողջ լերուք և օրհնեալք յԱստուծոյ և յամենայն սրբոց նորա և ի մէնջ։ Ամէն։»

Ի 25. Հոկտեմ. 1869 ամի

Համար 346.

Ի ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԷ

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Անշուշտ մեծարգնեայք հոգեկան խմն բերկրութեամբ ընթերցեալ էն սոյն այս Արարատի մէջ՝ Նոր Նախիջևանի Չալթր գիւղի բարենախանձ Հայազգի հասարակութեան արգասաւորուած եռանդուն ջանքն ու գովելի գործունէութիւնքը յիշեալ գիւղին մէջ իրենց ի նորումն յարմարաշէն կանգնեցուցած հոյակապ Հոգևոր—Ծխական Դպրոցի շինուածոյն նկատմամբ։

Այս Դպրոցիս շէնքը կատարելապէս աւարտեցաւ 18-ն անցելոյ Հոկտեմբերի՝ և հետևեալ օրը կատարեցաւ օրհնութեան և բացման հանդէսը ի ներկայութեան տեղական և մասամբ դրացի գիւղական հասարակութեան։ Հրաւիրուած էր ասոր նաև անգամ Հոգևորական Կառավարութեան տեղւոյս Նոր—Նախիջևանի բարեկրօն Պօղոս Աւագ քահանայն Խուձեանց և տեղւոյն Ստանովոյ Բրիստավը, յորոց առաջինն զկնի աւարտման հանգիստին համառօտ ու պարզ բանիւք խրախուսեց ու օրհնեց հասարակութիւնը ու Դպրոցի Հոգաբարձուքը։ Յետ որոյ՝ Հայոց լեզուի ուսուցիչ դպրոցին՝ Պարոն Մարտիրոս Պճոյեան կարդաց ճառ, որ զգոյս հետ առաքի առ Խմբագրութիւնդ։

Այս տեղ՝ մէկ երևոյթ խոր տպաւորութիւն արաւ շրջակայից վերայ, այն է՝ մէկ մի եղաւ ասաց և վիճեց ալ թէ մեր սոյնօրինակ Դպրոցք չունին չորրորդ կարգի դպրոցաց յատկացեալ արտօնութիւն. առ այս բան նորա թէև ցոյց տրուեցաւ իրեն հրապարակաւ ի Թեմական Վերատեսչէ Հոգևոր—Ծխական դպրոցաց կողմանցս՝ որ և Փոխանորդ Առաջնորդութեան վիճակիս՝ Արժանապատիւ Սարգիս վարդապետէն երկուած հեռագիրը մեր սոյնօրինակ դպրոցաց ունեցած արտօնութեան մասին, սակայն՝ նա դարձեալ կըպնդէր իրենին վերայ։ Նորա միւս խօսքն ալ այս էր, որ միամիտ գիւղականք յայսմ մասին բոլորովին կխաբուին և ընդ վայր կջանան երկել իրենց զաւակունքը այսպիսի արտօնութիւն չունող Դպրոց *)։

Այս իրողութիւնը շատերուն համար բնականապէս հետաքրքրական բան մի էր, թէ որդեօք երկու վիճաբանողներէն որո՞ւն բանը շիտակ է։ Միով բանիւ շատ տխուր զգացմունքի ենթարկուեցաւ հասարակութիւնը, ինչպէս որ երևեցաւ ինձ **)։

Շատ և շատ ցանկալի է որ այս ամենակարևոր խնդրոյս մասին պէտք եղած տնօրէնութիւնը լինէր։

Օծ. Թեմ. Վերատեսչէ Հոգևոր Ծխական Դպրոցաց Հայոց Նոր—Նախիջևանի և շրջակայ Գիւղից Թեմականէից

ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱՅ ՄԱՔՍԸՄԱՃԵԱՆՑ.

Ի 26ն Փետր. 1876 ամի,

Ի Նոր—Նախիջևան.

ՀԱՇԻՒ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ ՀԱՅՈՑ ՇԱՄԱԽԻՈՑ.

Խմբագրութեան Արարատ Ամսագրոյ.

Շամախւոյ Օրիորդական վարժարանի Հոգաբարձուք իւրաքանչիւր տարի սովորութիւն ունենալով հաշիւ տալ ուսումնարանի վարչութեան, այս անգամ ևս հաշիւ տուեցին, և այժմ ցանկանալով տարածել ի լուր մեր Ազգայնոց նոյն վարժարանի հաշիւն Ձեր պատուական Ամսագրոյ միջոցաւ, վասն որոյ ուղարկում ենք հաշուեցուցակն ծախուց և մուտից 1875 թուականի,—ընդ սմին և անուանք ընկերութեան թէ անփոփոխ

(*) Այսպիսի ցնորաբանութեանց ուշադրութիւն տալ աւելորդ է, մանաւանդ ի պատեհ ժամանակին պիտի հրատարակուին վանական միջակային եւ Ծխական Դպրոցաց մշակեալ եւ ի նորոյ պատրաստեալ կանոնադրութիւնքը, որք աւելի պարզ կյայտնեն իւրեանց շրջանը եւ սահմանը։ Ծ. Խ.

(**) Վիճաբանութիւն գրգռողին համար բաւական է ակնարկել, որ «Ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա»։ Ծ. Խ.

անդամոց և Թէ փոփոխական անդամոց, նոյնպէս և անուանք խնամակալուհեաց և ցուցակ ուսուցչաց, ուսանողուհեաց և ուսանելի առարկայից։

Շամախւոյ Ս. Սանդխտեան Օրիորդական վարժարանն օժանդակվում է ընկերութեան անդամոց և խնամակալուհեաց տուրքերով, նոյնպէս և առանձնակի նուէրներով. ուստի և մեք Հոգաբարձուքս ի խորոց սրտէ շնորհակալութիւն ենք մատուցանում Մեծապատիւ անդամոց, որոնք չեն խնայում առատօրէն լումաներ ձգելու ազգային գանձանակը, որով և ուսումնարանն կառավարվում է, և կխնդրեմք անդամներից՝ որ չդադարին և չվհատին իւրեանց տուրքը տալու, այլ վստահ լինին՝ որ իւրեանց տուրքերով կրթվում են մերազնեայ օրիորդք՝ որոնք կլինին ապագայում կրթեալ մայրեր։

Հոգաբարձուք Յովհաննէս Խալափեանց
Յովհաննէս Միրզաբէկեանց

Ի 10 Մարտի 1876 ամի
Ի Շամախի.

Մուտք.

	Ռ.	Կ.
1875 Թուականի Յունվարի 1 ին ուսումնարանի մայր գումարն մնացել էր	1747	17
Անդամակցական տուրք քսան և հինգ բարերար և անփոփոխ անդամոց	350	
Անդամակցական տուրք քսան և չորս խնամակալուհեաց . .	120	
Աշակերտուհիներից ստացած Թոշակադրամք	168	45
Տան վարձ՝ ստացեալ ի Կոնսիստորիէն Հայոց Շամախւոյ . .	5	
Գանձանակադրամք ժողոված յաւուր Ծաղկազարդի ի ձեռն Սահակ վարդապետի	31	50
Աշակերտուհեաց ձեռագործաց խաղարկութիւնից ստացած օգուտն .	46	80
Տոկոսադրամք ուսումնարանի 1700 ռուբ. մայր գումարի յընթացս 1875 ամի	254	

Նուիրատուք.

Շամախեցի Պ. Կարապետ Սաղաթելեանցից . . .	20	
Հայրապետ—բէկ Մարգանեանցից.	20	
Գանձակեցի Սիմէօն Տէր Գրիգորեանցից ի յիշատակ հոգւոյ հանգուցեալ որդւոյ իւրոյ Յովհաննիսի Սիմէօնեան Տէր Գրիգորեանց . .	30	
Շամախեցի Եգոր Քալանթարեանցից	1	
Յակովբ Պօղոսեանցից . .	2	
Ներսէս Սարգիսբէկեանցից . . .	1	
Աւետիք Տ. Յարութիւնեանցից . .	1	40

Բոլոր մուտք Ս. Սանդխտեան օրիորդական վարժարանի Շամախւոյ յընթացս 1875 Թուականի հանդերձ մայր գումարաւ են՝ . . .	2798	32

Պ. Վարդանեանցն ընծայեց մի հատ «Ընթերցարան» Հ. Ղուկասեանցի. Աղէքսանդր Լալայեանցն մի հատ «Պարտիզէկ»։

Խորէն քահանայ Միրզաբէկեանց 1 հատ «Պարտիզէկ», և Պօղոս Ներսէսեանցն 1 հատ «Պարտիզէկ»։

Ծախք յընթացս 1875 ամի.

Զանազան նիւթեղինաց, աշակերտուհեաց ձեռագործութեան, վառելափայտի և այլ կարևորութեանց համար եղած են ծախք . . .	63	25
Ռոճիկք վարժուհւոյ և ուսուցչաց յընթացս 1875 Թուականի .	420	96
Ճանապարհածախք վարժուհւոյ Դուբայից մինչև Շամախի . .	30	
Ծառայի վարձ . . .	19	
Տան վարձ, ուր գտանի ուսումնարանն	139	98
Ամէնն . .	673	19

Ուրեմն ընդ ամէնն գումար մուտից յընթացս 1875 Թուականի եղել է՝ 2798 ր. 32 կ. իսկ գումար ծախուց— 673 ր. 19 կ. հետևապէս ծախքն հանելով մուտքից մնացներկայ տարւոյս 1876 Թուականի Յունվարի 1-ն ուսումնարանական մայր գումար պարոն Գանձապահ — Հոգաբարձու Յովհաննէս Խալափեանցի մօտ . . 2125 13

Որից երկու հազար ռուբ. ընկերութեան խորհրդով տուած է տոկոսով զանազան անձանց։

Ցուցակ Ս. Սանդխտեան օրիորդական վարժարանի գրադարանի, ուսուցչաց, ուսանողուհեաց և ուսանելի առարկայից։

Ա. գրադարան.—սորա մէջ աւանդվում են Կրօնի Ընթերցարան Հ. Ղուկասեանցի, աշխարհաբար Քերականութեան առաջին մասն, Ազգային երգեցողութիւն, Հայոց Պատմութիւն, Ռուսաց

լեզու, Թուաբանութիւն, Գծագրութիւն, Ռուսաց և Հայոց գեղագրութիւն, կար և ձեռագործութիւն: Ուսանողուհեաց թիւն է 23. — այս դասատանը կան երեք ուսուցիչ և մի վարժուհի։

Նախապատրաստական դասատանում ուսանում են Հայերէն և Ռուսերէն գրել և կարդալ, երգեցողութիւն, կար և ձեռագործութիւն. — այս տեղ կայ մի ուսուցիչ. 35 աշակերտուհիք կան։ Ուսումնարանի բոլոր աշակերտուհիներից միայն 10ն են ձրիաձաշակ, իսկ մնացեալքն թոշակաւորք են։

Առաջին տեղափոխ տղամարդ.

1, Սամուէլ Բաղիրեանց, 2, Յովհաննէս Խալաթեանց, 3, Յովհաննէս Միրզաբէկեանց, 4, Խաչատուր Եղիազարեանց, 5, Մովսէս Աշուղեանց, 6 Կարապետ Քալանթարեանց, և 7, Աբրահամ Գասպարեանց։

Տարեկան տղամարդ ¹).

1, Անդրէաս Արքեպիսկոպոս, 2, Սահակ վարդապետ, 3, Պօղոս Շամխեան Մելիք—Բէգլարեանց, 4, Մելքում Ափշարեանց, 5, Պետրոս Տէր Մարկոսեանց, 6, Միքայէլ Ղարադաշեանց, 7, Բաղիշ Սարգիսբէկեանց, 8, Պօղոս Ներսիսեանց, 9, Արտեմ Ներսէսեանց, 10, Բագուարենակ Գրիգոր Դիլոարեանց, 11, Բագուար Գրիգոր Ալվազեանց, 12. Գէորգ Կաճկաճեանց, 13 Շահնշահ Վլասեանց, 14, Յարութիւն Տէր Եսայեանց, 15. Միքայէլ Արամեանց, 16, Յովհաննէս Իւզբաշեանց, 17. Աստուածատուր Զաքարեանց, 18, Զաւալ Տէր Ստեփանեանց, 19. Յարութիւն Տէր Սարգսեանց, 20, Ներսէս Աթաբէկեանց, 21, Բաղդասար Նազարեանց, 22. Գանձակեցի Ներսէս Տէր Ներսէսեանց, 23. Սահակ—Սերեբրյակեանց, 24. Պետրոս Խաչատրեանց, 25. Յովսէփ Մելիք—Բէգլարեանց, 26, Դաւիթ Գէորգեանց, 27, Գէորգ Միրզաբէկեանց, 28. Թովմաս Ամիրեանց, 29, Թիֆլիզեցի Գէորգ Տէր Յարութիւնեանց։

Խնամակալուհիք.

1, Մարգարիտ Զօհրաբեանց, 2. Զարվարդ Ափշարեանց, 3, Ոսկի Կաճկաճեանց, 4. Թագուհի Նազարեանց, 5. Խանում Խալաթեանց, 6, Կատարինէ Ներսիսեանց, 7. Սօնա Ներսիսեանց, 8, Մարիամ Նիկիտեանց, 9. Զամբաղ Քալանթարեանց, 10, Մարիամ Իւզբաշեանց, 11, Մարիամ Զախարեանց, 12. Մարգարիտ Ափշարեանց, 13. Զարվարդ Միրզաբէկեանց, 14, Մարիամ Աշուղեանց, 15, Մարիամ Տէր Մարկոսեանց, 16, Խանում Լազարեանց, 17, Ովսաննա Եղիազարեանց, 18, Եղիսաբէթ Վարդանեանց, 19, Մարիամ Լալայեանց, 20. Զարվարդ Լալայեանց, 21, Զարվարդ Գեօգչայեանց, 22. Փեփրոնէ Աթաբէկեանց, 23. Ոսկի Սերեբրյակեանց, 24, Եկատարինէ Միրզայեանց։

(1) Կան ապաւեկներ մի քանի անդամոց եւ խնամակալուհեաց վերայ, որոց հոգաբարձութիւնն խնդրում է որ իւրեանց տուրքը վճարեն։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿՔ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ.

Հետեւեալ զգուշացուցիչ յօդուածը այլ և այլ տեսութեամբ համայն մերազնեայց ուշադրութեան արժանի կգտնեմք, և արժան կհամարիմք ամսագրոյս մէջ ևս հրատարակել։

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՍ Ս. ՍԻՄՕՆԻ ՃԻԶՎԻԹ ՄԱՅՐԱՊԵՏԱՑ ԴՊՐՈՑՆԵՐԸ.

Հայ մը պէտք է մասնաւոր Նեղութիւն մը ըզգայ այս մայրապետաց ճերմակ գլխարկներուն լայն եզերց շուքին տակ ծածկուած դէմքերը տեսնելով, զի ասոնք Հայ ազգին անզգալի կերպով դէպ ի կորստեան անդունդը կառաջնորդեն։

Ինչո՞ւ համար ասոնք իրենց ծննդեան երկիրները թողլով հազարաւոր մղոն հեռուները կերթան, ի՞նչ նպատակաւ. – Պէտք չէ մեզ նպատակնին, զի ասոր վրայ ինչ ալ գրուցենք՝ եւթադրական է, գործնինուն նայինք և անով միայն կրնամք դրական կերպիւ հաստատել՝ թէ ասոնք մեր ազգին կը վնասե՞ն թէ ոչ։

Գրեթէ ամեն երկրի գլխաւոր քաղաքաց մէջ այս սպիտակ փեղչրները կը տեսնուին, որոց մէկ մասն հիւանդանոցաց մէջ կաշխատի և մէկ մասն ալ իգական սեռին դաստիարակութեանը կզբաղի։

Կոստանդնուպօլիս ալ ամենէն աւելի մայրապետաց բազմութիւն մի իր ծոցը սնուցանող քաղաքաց մին է։ Անկարելի է Բերայի մէջ փոքրիկ շրջապայութիւն մ՚ ընել առանց այս մայրապետներէն մի քանի հատ տեսնելու։ Ասոնք՝ ինչպէս վերը ըսինք, մէկ մասն հիւանդ դարմանե-